



**ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՁԱՅԻՆ ԽՈՐՀՈՂԻՆ
ԵՎ ՔՈՒՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ՝ ՄԵԾ ԵՂԵՌԻՆ
70-ԱՄՅԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԹԻՎ**

Հայաստանյաց Առաքելական մեր Եկեղեցին, իր հոգևոր սպասավորներին ու համայն մեր հավատացյալ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռք աշխարհի, այս տարի ապրիլի 24-ին ոգեկոչելու են յոթանանամյա տարեդարձը 1915-ի հայկական ցեղասպանության, գործադրված Օսմանյան կայսրության հրահանգով, որին զոհ գնաց Արևմտյան Հայաստանի (Անատոլիա) շուրջ երկու միլիոն հայ քրիստոնյա ազգաբնակչությունը, այդ թվում նաև տասնյակ եալիսկոպուներ ու քավմահարյուր վանականներ և քահանաներ: Հրկիվվեցին ու քանդվեցին մոտ հազար հայկական պատմական վանքեր ու Եկեղեցիներ կառուցված 5—19-րդ դարերի ընթացքում, կորսույան մատնվեցին անհաշիվ Եկեղեցական սրբություններ, հին ձեռագրեր, սրբանկարներ, բոլորը պատմական ու գեղարվեստական արժեք ներկայացնող:

Հայաստանում և հայ սփյուռքի տարածքի վրա գործող բոլոր հայկական Եկեղեցիներում, ապրիլի 24-ին կատարվելու են սուրբ պատարագներ և հոգեհանգստյան արարողություններ աղոթելու 1915-ի ցեղասպանության անմեղ զոհերի հոգիների համար, հայցելով բարեգութն Աստծուց ողորմություն և առդարրություն: Այդ օրը աղոթելու ենք նաև համայն աշխարհի խաղաղության համար, որպեսզի այլև երեք և ոչ մի ազգի կյանքում չկրկնվեն նման ողբերգություններ:

Սույն Մեր գրով եղբայրական սիրով ի Քրիստոս դիմում ենք Զերդ Սրբության, որ Զեր աղոթքներում հիշեք 1915-ի հայ նահատակներին և Զեր բարձր հեղլու ակությամբ, Զեր արդար ձայնը լսելի դարձնեք մեր օրերի աշխարհին, որ միշտ կարիքը ունի Զեր սխիթարիչ ու հուսադրիչ պատգամներին:

Կկամենայինք Զեզ հավաստիացնել նաև, որ մեր ազգի մեծ ողբերգությունը՝ ոգեկոչելիս, հեռու է՝ մեվանից թշնամանքի ոգին կամ մտածումը ծայրահեղ արարքների: Մեր միակ հոգեկան մղումն է՝ աղոթել մեր երկու միջինն զոհերի հոգիների համար ու արդարություն հայցի: Մոռացության տալ անցյալի ողբերգությունները՝ պիտի նշանակեր տկարացնել, մթագնել մարդկության հիշողությունը, պիտի նշանակեր եղծել պատմությունը, պիտի նշանակեր խափանել ճշմարտությունը ու խեղամահ անել արդարության ձայնը, պիտի նշանակեր ճանապարհ հարթել ապագա նոր աղետների ու ցեղասպան ոճիրների:

Սնցյալի ողբերգությունների անաշառ դատաստանը, պատմության տիպուղ դեպքերի ճշմարտության բացահայտումը, արդարության ձայնի բարձր ու ապատ շեփորումը,—ահա ամուր հիմքերը մի նոր աշխարհի կառուցման, ուր անհիտիր բոլոր ազգերի զավակները պիտի հասնեն այս փրկարար գիտակցության, թե զավակներն են միևնույն Աստծուն, թե քաղաքացիներն են միևնույն մարդկային աշխարհին միևնույն երկնակամարի տակ և որ բոլորը ունեն միևնույն ճակատագիրը: Մարդու ճակատագիր, ազգությունների ճակատագիր, աշխարհի ճակատագիր, հետ այսու մանավանդ, կազմում են մեկ միաձույլ իրողություն, մեկ հրամայական, մեկ ապագա: Այդ գիտակցությամբ միայն, այս աշխարհի մարդիկ պիտի կարողանան միատեղ աղոթել ասելով՝ «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ Եղիշի անուն Քո, Եկեսցի արքայութիւն Քո, Եղիշին կամք Քո որպէս յերկինս և յերկրի»: Այն ժամանակ միայն Երկրի վրա պիտի լինի «խաղաղություն և հաճություն ի մարդիկ», այն ժամանակ միայն մարդիկ, որպէս խաղաղարարներ, արժանի պիտի լինեն կոչվելու «որդիք Աստուծոյ»:

Հարգալից սիրով մաղթում ենք Զեր Սրբության, մշտատև առողջություն և ճառագայթումը Զեր հոգնոր առաքելության Զեր սուրբ Եկեղեցում և համայն աշխարհում խաղաղությամբ:

«Այլ Աստուած յուսոյ լի արացէ զձեզ ամենայն խնդրութեամբ և խաղաղութեամբ, առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13): Ամեն:

Վ Ա Զ Գ Ե Ն Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

18 հունվար 1985 թ.

